ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԹՈՐԳՈՄ ԳՐԻԳՈՐԻ ԱՂԱՆՅԱՆ

ԵՐԿՐԱՇԱՐԺԸ ՎԵՐԱՊՐԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱԴԱՊՏԱՑԻԱՆ

Է.00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի
գիտականա ստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2017

ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ТОРГОМ ГРИГОРОВИЧ АГАНЯН

СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНАЯ АДАПТАЦИЯ НАСЕЛЕНИЯ ПЕРЕЖИВШЕГО ЗЕМЛЕТРЯСЕНИЕ

АВТОРЕФЕРАТ
Диссертации на соискание ученой степени
кандидата исторических наук по
специальности 07.00.04 "Этнография"

Ереван-2017

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝ պ.գ.թ., Հ.Գ.Սարգսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ., պրոֆ. Ռ.Ա.Նահապետյան

պ.գ.թ. Ա.Խ.Սարգսյան

Առաջատար կազմակերպություն՝ Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան:

Պաշտպանությունը կայանալու է 2017թ. հունիսի 16-ին, ժ. 14:00-ին ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 007 Հնագիտություն և ազգագրություն մասնագիտական խորհրդում (հասցեն՝ Երևան-0025, Չարենցի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017թ. մայիսի 16-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

պատմական գիտությունների թեկնածու Հ.Ա.Մելքոնյան

Тема диссертации утверждена на ученом совете Института археологии и этнографии Национальной академии наук Республики Армения

Научный руководитель: к.и.н. Г.Г.Саркисян

Официальные оппоненты: д.и.н., проф.Р.А.Наапетян

к.и.н. А.Х. Саргсян

Ведущая организация: Мемориальный комплекс Сардарапатской битвы, национальный музей этнографии Армении и истории освободительной борьбы.

Защита состоится 16 июня 2017г. в 14:00 часов, на заседании специализированного совета 007 ВАК по археологии и этнографии, при институте археологии и этнографии НАН РА (адрес: Ереван-0025, ул. Чаренца 15)

Автореферат разослан 16 мая 2017г.

Ученый секретарь специализированного совета: кандидат исторических наук У.А.Мелконян

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հիմնախնդրի նկարագիրը. Յուրաքանչյուր աղետ իր հետ բերում է ավերիչ փոփոխություններ առանձին անհատների, մարդկանց խմբերի և հանրույթների կյանքում: Աղետները կտրուկ կերպով ապակազմակերպում են հասարակության կայացած կենսաձևերը և կենսագործունեությունը: Ինչպես ցույց են տալիս ՄԱԿ-ի տվյալները, բոլոր տեսակի աղետների շարքում զոհերի թվով առաջին տեղում ջրաօդերևութաբանական աղետներն են (ջրհեղեղներ, ցունամիներ և այլն), երկրորդ տեղում՝ երկրաբանականը (երկրաշարժեր, հրաբուխներ և այլն), իսկ երրորդ տեղում՝ տեխնածին աղետները:[1] Ինչպես բնական, այնպես էլ տեխնածին աղետները թողնում են խորը սոցիալական հետևանքներ, քանի որ մարդկային զոհերի պատճառ են դառնում, իսկ արհավիրքից փրկվածները երկար ժամանակ գտնվում են հոգեկան, ֆիզիկական և սոցիալական ծանր վիճակում: Փոխվում է մարդու ապրելակերպը՝նա հայտնվում է սոցիալական ճգնաժամի մեջ, ու հարցը միայն նրանում չէ, որ անձը զգայաբար է վերապրում տեղի ունեցածը: Ցնցումը և' միաժամանակյա իրադարձություն է, և' գործընթաց, որն ազդում է մարդու հետագա կյանքի վրա: Հաճախ այդ ամենն անդրադառնում է ոչ միայն մարդ անհատի, այլև մարդկային մեծ խմբերի վրա:

Ճակատագրի բերումով հայ ժողովուրդը տուն է կառուցել երկրաշարժավտանգ գոտում, որտեղ տեղի են ունեցել տարբեր ուժգնության երկրաշարժեր: 1988 թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի երկրաշարժը հայ ժողովրդի համար աննախադեպ էր իր տնտեսական, սոցիալ-ժողովրդագրական, մշակութային հետևանքներով: Ընդամենը 40 վայրկյանում Հայաստանի հյուսիսային շրջանները վերածվեցին «Աղետի գոտու»: Աղետը ոչ միայն տվյալ տարածքում, այլև ողջ հանրապետությունում առաջ բերեց բարոյահոգեբանական նոր մթնոլորտ, տնտեսական խիստ ծանր կացություն, նոր մտածելակերպ, աշխարհայացք ու աշխարհընկալում, նոր արժեքներ, սոցիալական նոր երևույթներ, երկրաշարժից ածանցված նոր սովորույթներ և նորմեր, ժամանակի նոր պարբերացում:

Երկրաշարժի հետևանքով հազարավոր մարդիկ ոչ միայն նյութական և ֆիզիկական կորուստներ ունեցան, այլև կրեցին բարոյահոգեբանական, սոցիալական զրկանքներ, քանի որ կանգ առավ հասարակական, քաղաքական զարգացումը, նեղացավ միջանձնային փոխհարաբերությունների շրջանակը, մարդկանց մեջ առաջացավ սոցիալական օտարում (ապագայի, վաղվա նկատմամբ հուսալքություն, կյանքի իմաստի արժեզրկում և այլն), ինչի արդյունքում սկսվեց զանգվածային արտագաղթ:

Երկրաշարժին հաջորդած Հայաստանի Հանրապետության անկախացումը՝ պետական, քաղաքական, տնտեսական կառավարման համակարգերի, հասարակական հարաբերությունների, մշակութային կյանքի արմատական վերափոխումներով ավելի բարդացրեց աղետից տուժած բնակավայրերի վերականգնումն ու աղետյալների ադապտացման գործընթացը:

---

[1]Բնական և տեխնածին աղետների նշված բաժանումն ամրագրված է միջազգային մի շարք փաստաթղթերում, մասնավորապես՝ Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի գործունեության կազմակերպման Համաձայնագրում, որը ստորագրվել է 1997թ. Սևիլիայում:
www.icrc.org/rus/resources/documents/misc/sevilleagreement-cooperation-261197.htmտե՛ս նաև Осипов В., Катастрофы в центре внимания ученых, //Вестник РАН, т. 65, № 6, с. 483 – 495, Москва, 1995.

Ստեղծված նոր իրադրությունը, երբ վերացան նախկին մշակութային համասեռությունը, փոխադարձ համաձայնվածությունը և կայունությունը, փոխեց մարդկային կյանքի ենթատեքստն ու սոցիալական գործողությունները, հասարակության նորմերը, արժեքները, համոզմունքները: Բնական աղետն ու սոցիալ-տնտեսական ճգնաժամը առաջ բերեցին գործելակերպի և մտածելակերպի սովորական ընթացքի շեղումներ, խեղեցին մարդկանց վարքը և ներաշխարհը՝ առաջ բերելով մեծ լարվածություն՝ կապված ծանր սոցիոմշակութային իրադրության ու ապագայի ակնկալիքների հետ: Էական և նշանակալի ադապտացիոն փոփոխություններ կատարվեցին մշակութային-արժեքային կողմնորոշումներում, անհատական և խմբային վարքի ռազմավարություններում, առողջության և կենսական այլ արժեքների նկատմամբ վերաբերմունքում, ընտանեկան, ազգակցական հարաբերություններում և այլ երևույթներում: Այս ամենը պահանջում է խորը և բազմակողմանի հետազոտություն՝ սահմանելու աղետյալների հարմարողական գործընթացի փուլերը, գնահատելու ընտրած ռազմավարությունը, ներկայացնելու ադապտացիոն պրակտիկաները: Հատկապես կարևոր է հիշյալ հիմնախնդիրների ազգագրական վերլուծությունը:

Թեմայի արդիականությունը. Ադապտացիան (հարմարողականությունը) միջդիսցիպլինար, բազմիմաստ տերմին է, որն օգտագործվում է գիտության տարբեր՝ ինչպես բնագիտական, այնպես էլ հումանիտար ոլորտներում, որպես գործիք՝ հասկանալու շրջապատող միջավայրի հետ սոցիալական և բնական համակարգերի փոխազդեցության առանձին դիտանկյունները: Ադապտացիայի հիմնախնդիրների լուծումը կարևոր տեսական նշանակություն ունի պատմամշակութային գործընթացների անհատական և ընդհանուր-հանրային չափորոշիչները հասկանալու, ինչպես նաև միջմշակութային պատմահամեմատական ուսումնասիրություններ կատարելու համար:

Մեզանում աղետների հետևանքների, դրանց հաղթահարման մեխանիզմների, աղետը վերապրածների հարմարվողականության եղանակների և աղետի հետ կապված այլ հիմնախնդիրների ուսումնասիրությունը դեռևս գտնվում է սաղմնային վիճակում: Մինչ օրս արժանի ուշադրություն չի դարձվել աղետների և արհավիրքների սոցիալ-մշակութային հետևանքներին, այսինքն այն իրողությանը, թե ինչպես են առանձին մարդիկ վերապրում սոցիալ-մշակութային դրամատիկ փոփոխությունները, որոնց մասնակիցն ու ականատեսն են իրենք, և թե ինչպես է դա դրսևորվում նրանց առօրյա կենցաղում և մշակույթում: Դեռ բավարար ուսումնասիրված չեն ընտանիքի՝ փոփոխվող սոցիալ-տնտեսական, քաղաքական և սոցիոմշակութային պայմաններին հարմարվելու հիմնախնդիրները:

Կարևոր գիտական նշանակություն ունի ադապտացիայի նորարարական կամ ավանդական բնույթի բացահայտումը, ինչպես նաև այն միջոցների ամբողջությունը, որոնց օգնությամբ գործողության մեջ է դրվում և իրականանում անհատի ադապտացիոն հնարավորությունը՝ «ադապտանտ-ադապտացվող միջավայր» համակարգի խախտված հավասարակշռությունը վերականգնելու համար:

Հիմնախնդրի ուսումնասիրությունը կարևորվում է նաև նրանով, որ Աղետի գոտում մինչ օրս չի իրականացվել գիտականորեն հիմնավորված քաղաքականություն՝ ուղղված ոչ միայն աղետի ենթարկված, այլև ամբողջությամբ վերցրած հասարակության այն խավերի հարմարողական գործընթացների արդյունավետ կազմակերպմանը, որոնք չկարողացան ադապտացվել կեցության փոփոխված պայմաններին: Քաղաքական, տնտեսական և

սոցիալական կյանքի գլոբալ մակարդակով արագացող նորացումը, տեխնոգեն քաղաքակրթության ճգնաժամը, արժեքների ու մոտիվների համամարդկային տեղաշարժը բարդացնում է մարդկանց ադապտացիայի գործընթացը, ինչը առաջնահերթ է դարձնում հարմարվողական գործընթացների էության, ձևերի և մեխանիզմների ուսումնասիրությունը:

Ուսումնասիրության նպատակը և խնդիրները. Աշխատանքի հիմնական նպատակն է հետազոտել Աղետի գոտու բնակչության ադապտացիոն մարտավարությունները կենսապահովման և սոցիոնորմատիվ մշակույթի առանձին ոլորտներում՝ հետերկրաշարժյան տնտեսական, սոցիալական և մշակութային արմատական փոփոխությունների համատեքստում, բացահայտել հարմարողականության հիմնական ձևերը՝ սոցիոմշակութային, սոցիալ-հոգեբանական, տնտեսական, ժողովրդագրական և այլ դրսևորումներով: Առաջադրված նպատակին հասնելու համար կարևորվել են հետևյալ խնդիրները.

- Ներկայացնել Աղետի գոտու սոցիալ-տնտեսական, մշակութային և ժողովրդագրական դրությունը մինչ երկրաշարժը և դրանից հետո, բնութագրել վերափոխումների գործընթացն ու դրանք պայմանավորող գործոնները:
- Ուսումնասիրել աղետը վերապրածների մտածողության արժեքային-նորմատիվ կառուցվածքի ձևափոխություններն ու վարքագծային-մոտիվացիոն արժեքները:
- Պարզաբանել բնակչության մեջ ձևավորված «գոյատևման մարտավարության» երևույթը՝ որպես նոր սոցիոմշակութային իրողություններին հարմարվելու հիմնական ձև:
-Ներկայացնել ադապտացիոն պրակտիկաների կոնկրետ դրսևորումներն ու առանձնահատկությունները տնտեսական գործունեության և զբաղմունքների մեջ՝ գյուղ-քաղաք կտրվածքով, ինչպես նաև բնակարանային խնդիրներն ու դրանց լուծման ձևերը:
- Բնութագրել ընտանիքն ու դրանում կատարված կառուցվածքային, գործառութային, վարքագծային փոփոխությունները՝ ընտանիքը դիտարկելով որպես հասարակական օրգանիզմի այն բաղկացուցիչ մասը, որը կրում է տվյալ ժամանակաշրջանի հիմնախնդիրների ողջ ծանրությունը: Ընտանիքը ներկայացվում է ավանդական և նոր մշակութային իրողությունների ենթատեքստում՝ վեր հանելով ներընտանեկան հարաբերություններում կատարված և ընթացող փոփոխությունները:
- Ուսումնասիրել սոցիալական և սեռատարիքային տարբեր խմբերի ադապտացիայի առանձնահատկությունները:

Գիտական նորայնությունը. Աշխատանքի գիտական նորայնությունն այն է, որ առաջին անգամ է ազգագրական հետազոտության ենթարկվել աղետը վերապրածբ նակչության՝ փոփոխված իրականությանը հարմարվելու գործընթացն ու դրա հոգեբանական, սոցիոմշակութային, ժողովրդագրական հետևանքները, որոնք բերեցին արժեհամակարգային փոփոխությունների: Թեմայի գիտական նորայնությունը կայանում է նաև նրա կոնկրետ պատմական բովանդակության և սոցիալ-տնտեսական ու կրթա-մշակութային ոլորտների արդյունավետ կառավարման քաղաքականության մշակման ժամանակ օգտագործելու մեջ:

Աշխատանքի մեթոդական հիմքը.Աշխատանքի համար որպես հիմք ծառայել են ազգագրական գիտության մեջ ընդունված հետազոտական մեթոդները: Ադապտացիայի գործընթացն ուսումնասիրելու համար մեթոդաբանական հիմք է ծառայել ոչ միայն դրա պայմանների ու գործոնների դիտարկումը, այլև հարմարվողականության՝ որպես մարդու

հոգեզգայական վիճակի գնահատումը: Ըստ այդմսոցիոմշակութային ադապտացիան դիտարկվել է որպես մի քանի գործընթացների ամբողջություն.

ա/ սոցիալական ադապտացիա, որը սոցիալական բազայիներևույթների (արժեքներ, նորմեր, աղքատություն, կրթություն և այլն) նկատմամբ հարմարվողականությունն է,

բ/ մշակութային ադապտացիա, որը մարդու հարմարվելն է նյութական, բնական ևսոցիալական միջավայրին,

գ/ սոցիալ-հոգեբանական ադապտացիա. սա անհատի սոցիալ-հոգեբանական մոդալության փոփոխություններն են միջավայրի ազդեցության տակ:

Հիշյալ խնդիրների ազգագրական վերլուծությունն իրականացվել է ՀՀ Շիրակի և Լոռու մարզերի քաղաքային և գյուղական բնակավայրերի՝ աղետը վերապրած բնակչության ադապտացիոն պրակտիկայի հետազոտության հիման վրա: Որպես ուսումնասիրության օբյեկտ ընտրվել է ընտանիքը, քանի որ հենց նրանում տեղի ունեցող փոփոխություններն են դառնում հասարակական գործընթացների զարգացման բնույթը որոշող ցուցիչներ:

Հետազոտությունն իրականացնելիս նկատի են առնվել նաև սոցիոմշակութային ադապտացիայի փիլիսոփայական վերլուծությունները, որոնցում այն դիտարկվում է միաժամանակ և' որպես գործընթաց, և' որպես վիճակ: Որպես գործընթաց այն իրականացվում է անհատի վարքը տիրող նորմերի և արժեքների հետ համապատասխանության բերելու համար: Ադապտացիայի վիճակն անհատի՝ արտաքին միջավայրի հանդեպ վերաբերմունքի բնութագրությունն է, որը ծառայում է ադապտացիայի՝ որպես գործընթացի հաջողության ցուցանիշ:

Աղբյուրները և գրականությունը.Աշխատանքի հետազոտական հիմքը կազմում են հարցաթերթային և խորացված հարցումները, որոնք հեղինակի կողմից իրականացվել են 2015-2016 թթ. Լոռու և Շիրակի մարզի գյուղական մի շարք բնակավայրերում և Վանաձոր, Սպիտակ և Գյումրի քաղաքներում: Սույն ատենախոսության մեջ օգտագործվել են նաև տարբեր կազմակերպությունների կողմից իրականացված սոցիոլոգիական հարցումների արդյունքները, որոնք լուսաբանում են Աղետի գոտու բնակչության կենսագործունեության մի շարք ոլորտները:

Որպես սկզբնաղբյուր օգտագործվել են արխիվային փաստաթղթերը, պարբերական մամուլի նյութերը, ինչպես նաև համացանցից վերցրած՝ Աղետի գոտու վիճակի նկարագրություններն ու առանձին մարդկանց պատմությունները: Սկզբնաղբյուրի արժեք ունեն նաև ազգագրագետների, հասարակական ու միջազգային կազմակերպությունների կողմից անցկացված հարցումների նյութերը:

Աղետի գոտու բնակչության ադապտացիոն գործընթացների վերաբերյալ ազգագրական հետազոտությունները սակավաթիվ են. դրանք գիտական նստաշրջաններում ազգագրագետների ու էթնոսոցիոլոգների զեկուցումներն ու հոդվածներն են: Թեմայի վերաբերյալ չափազանց արժեքավոր նյութեր են պարունակում Հայաստանի բնակչության ընթացիկ հասարակական, տնտեսական, մշակութային հարաբերություններին վերաբերող ազգաբանական, էթնոհոգեբանական, էթնոսոցիոլոգիական, ժողովրդագրական, մշակութաբանական հետազոտությունները: Ժողովրդագրականգործընթացներն ու

արտագաղթի հիմնախնդիրը բազմակողմանիորեն լուսաբանված են Ն.Գաբրիելյանի,[2] Մ.Գալստյանի,[3] Հ.Սարգսյանի,[4] Ն.Մարգարյանի[5] և Ա.Բոյաջյանի[6] մի շարք աշխատություններում: Աղքատությանն ու դրա սոցիոմշակութային հետևանքներին են նվիրված Հ. Խառատյանի խմբագրությամբ ազգագրագետների խմբի կողմից հրատարակած երկու գրքերը,[7] ինչպես նաև Ա. Թադևոսյանի ուսումնասիրությունները:[8] Աղետի գոտու բնակչության հոգեվերականգնման և հետաղետյան շրջանում հոգեբանական ադապտացիայի հարցերի լուսաբանվել են Կ.Սահակյանի մի շարք աշխատություններում:[9] Անցումային շրջանի հայկական գյուղական համայնքում և ընտանիքում ընթացող գործընթացների ու դրանցում կատարված ձևափոխությունների արժեքավոր ազգաբանական հետազոտություններ են Մ.Գաբրիելյանի աշխատությունները:[10]

Աշխատանքի համար մեթոդաբանական կարևոր նշանակություն ունեն ռուս ազգաբանների՝ թեմայինառնչվող հետազոտությունները: Այդ առումով խիստ արժեքավոր են Գ.Կոմարովայի՝ տեխնոգեն աղետի էթնոմշակութային առումների հետազոտությանը նվիրված ատենախոսությունն ու Ա.Տեր-Սարգսյանցի՝ հետխորհրդային շրջանի նոր պայմաններին հայերի հարմարվողականությանխնդիրների ուսումնասիրությունը:[11]

---

[2]Գաբրիելյան Ն., Շիրակի մարզի բնակչության միգրացիոն շարժերի աշխարհագրական վերլուծությունը,Եր., 2006; նույնի, Աղետի գոտու բնակչության միգրացիոն գործընթացների զարգացման ընդհանուր միտումները, ՇՀՀԿ Գիտականաշխատություններ, հ. VII, Գյումրի, 2004, էջ 92-97:

[3]Գալստյան Մ., Շիրակի մարզի բնակչության աշխատանքային միգրացիոն գործընթացներն արդի շրջանում, ՇՊՄԺ հանրապետական յոթերորդ գիտական նստաշրջանի նյութեր,Գյումրի, 2007, էջ 174-179; նույնի, Բնակչության «գոյատևման մարտավարությունը» Շիրակի մարզում (ըստ 1994-1995թթ.դաշտային ազգագրական նյութերի), ՇՊՄԺ հանրապետական երկրորդ գիտաժողով, զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 1996, էջ 80-81:

[4]Սարգսյան Հ., Բոյաջյան Ա., Ժողովրդագրական գործընթացները Գյումրի քաղաքում (1990-1999 թթ.), ՊԲՀ, Եր., 2002, թիվ 2, էջ 233-242; Սարգսյան Հ., Բոյաջյան Ա., Գյումրու աշխատանքային ռեսուրսների և բնակչության զբաղվածության վերլուծման փորձ 1990-2000 թթ., ՇՀՀԿ Գիտական աշխատություններ, հ. 3, , ԳԱ հրատ., Եր., 2000, էջ 155-160:

[5]Մարգարյան Ն., Ժողովրդագրական գործընթացները Շիրակի մարզում 1989-1998 թթ., ՌԱՀՀԿ հրատ., Եր., 2000:

[6]Բոյաջյան Ա., Լենինական-Գյումրիի բնակչության շարժընթացը 1950-2000թթ., Ատենախոսության սեղմագիր, Եր., 2008:

[7]Պատմություններ աղքատության մասին, գիրք առաջին, Եր., 2001, գիրք երկրորդ, Եր., 2007:

[8]Թադևոսյան Ա., Կրթությունը և ընտանիքը Գյումրիում վերջին ութ տարիների ընթացքում, ՇՊՄԺ հանրապետական երկրորդ գիտաժողով, զեկուցումների թեզիսներ, Գյումրի, 1996,էջ 82-84; նույնի, Գոյատևման ռազմավարությունը հասարակական համագործակցության համատեքստում, Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, Եր., 1998; նույնի, Աղքատության համակարգային հիմքերը և հաղթահարման ուղիները Հայաստանում, Եր., Միժի հրատ., 2001: նույնի, Միգրացիան առօրեականություն. Ճանապարհորդություն մշակույթների և պրակտիկաների սահմանագծին, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր., 2014:

[9]Սահակյան Կ.,Վերակազմավորված ընտանիքների տիպաբանական առանձնահատկությունները հետաղետյան շրջանում /ազգահոգեբանական ակնարկ/, Արդի էթնոմշակութային գործընթացները Հայաստանում, Հանրապետական գիտական նստաշրջան, զեկուցումների հիմնադրույթներ, Եր., 1997, էջ 37-39; նույնի, Հետաղետյան ընտանիքում միջանձնային հարաբերությունների ախտորոշման մեթոդիկայի հարցեր, ՇՀՀԿ Գիտական աշխատություններ, հ. XI, Գյումրի, 2008, էջ 158-162:

[10]ԳաբրիելյանՄ., Հասարակական և մշակութային գործընթացները Հայաստանի Հանրապետության արդի գյուղում (ազգագրական ուսումնասիրություն), ատենախոսության սեղմագիր, Եր., 2001; նույնի, Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը, «Գիտություն» հրատարակչություն, Եր., 2001; նույնի, Հայկական ընտանիքն անցումային շրջանում (ազգաբանական ուսումնասիրություն), Եր., 2005; նույնի, Աղքատության հաղթահարման ուղիները գյուղում և քաղաքում, Եր., 2001:

[11]Тер-Саркисянц А.,Адаптация армян к новым условиям постсоветского времени, Исследования по прикладной и неотложной этнологии. – Вып. 211. – М., ИЭА РАН, 2009.

Հետազոտության մեթոդաբանական հիմք է ընդունվել Է.Ս.Մարգարյանի, Յու.Ի.Մկրտումյանի և Ս.Ա.Հարությունովի կողմից առաջադրված մշակույթի տեսությունն ու դրանում սահմանված «կենսապահովման մշակույթ» հասկացությունը,[12] ինչպես նաև էթնիկական էկոլոգիայի հիմնախնդիրներին վերաբերող Վ.Կոզլովի[13] աշխատություններն ու ադապտացիայի վերաբերյալ ազգաբանական ուսումնասիրությունները[14]:

Աշխատանքի կիրառական նշանակությունը. Աղետը վերապրած ընտանիքներիսոցիոմշակութայինադապտացիայի համակողմանի ազգագրական ուսումնասիրությունը չափազանց կարևոր նշանակություն ունի ոչ միայն գիտական, այլև գործնական, կիրառական տեսանկյունից: Կիրառական առումով աշխատանքը կարևոր է ինչպես նյութերի համալիր քննության, այնպես էլ կոնկրետ եզրակացությունների ու եզրահանգումների տեսանկյունից: Նման վերլուծությունը հնարավորություն է տալիս վեր հանել հասարակության մեջ առկա հիմնախնդիրների ողջ համապատկերը, սահմանել ընտանիքի ինստիտուտի գործառնության վրա արտաքին գործոնների ազդեցության աստիճանն ու սոցիոմշակութային ադապտացիայի հիմնական մեխանիզմներն ու ձևերը:

Հասարակության մեջ առկա հիմնախնդիրների լուծման գործում անհրաժեշտ է ներառել նաևազգագրական հետազոտությունների արդյունքները, քանի որ մեր օրերում առավել քան անհրաժեշտ էնախանշել սոցիալ-տնտեսական բարեփոխումների ոչ միայն տնտեսական և բնապահպանականարդյունքները, այլև նախատեսել դրանց սոցիոմշակութային հետևանքները:

Աշխատանքի պաշտոնական հավանությունը. Ատենախոսական աշխատանքը քննարկվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնում և ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնում: Աշխատանքի որոշ հիմնախնդիրների վերաբերյալ 2016թ. զեկուցումներ են կարդացվել Գյումրիում և Բաթումում կայացած միջազգային գիտաժողովներիժամանակ: Ուսումնասիրության որոշ դրույթներ հրատարակվել են հոդվածների ձևով:

Աշխատանքի կառուցվածքը.Ատենախոսական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից (որոնցից յուրաքանչյուրն իր հերթինստորաբաժանվում է երեք ենթագլխի), վերջաբանից, հավելվածից և գրականության ցանկից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածությունում հիմնավորված են թեմայի ընտրությունը, կարևորությունը և անհրաժեշտությունը: Ձևակերպված են ուսումնասիրության հիմնական նպատակներն ու

[12]Арутюнов С.А., Маркарян Э.С., Мкртумян Ю.И. Проблемы исследования культуры жизнеобеспечения этноса // СЭ, 1983, № 2, с.22-31; Культура жизнеобеспечения и этнос. Опыт этнокультурологического исследования (на материалах армянской сельской культуры),/отв. ред. С.А.Арутюнов, Э.С.Маркарян/, изд.АН АрмССР, Ереван, 1983.

[13]Козлов В.И. Методологические основы этнической экологии и вопросы их практического применения, Методы этноэкологической экспертизы. М., 1999; Этноэкологические аспекты духовной культуры/ Ред.: В.И. Козлов, А.Н. Ямсков, Н.И. Григулевич, М., 2005.

[14]Адаптация народов и культур к изменениям природной среды, социальным и техногенным трансформациям /отв, ред. А.П. Деревяко, А.Б. Куделин, В.А. Тишков/, Отделение ист.-филол. наук РАН, Российская политическая энциклопедия, Москва, 2010.

խնդիրները, գիտական նշանակությունը: Ներկայացված են թեմայի ուսումնասիրվածության աստիճանը, առանձնահատկություններն ու հետազոտության սկզբունքները:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՂԵՏԻ ԳՈՏԻՆ ՄԻՆՉ ԵՐԿՐԱՇԱՐԺԸ ԵՎ ՀԵՏԵՐԿՐԱՇԱՐԺՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Այս գլխում պատմագիտական, հայրենագիտական, ժողովրդագրական և այլ բնույթի հետազոտությունների, արխիվային փաստաթղթերի և հեղինակի կողմից հավաքված դաշտային ազգագրական ու սոցիոլոգիական նյութերի հիման վրա ներկայացվել է ներկայիս Շիրակի և Լոռու մարզերում ընդգրկված նախկին վարչական շրջանների նկարագիրը՝ հիշյալ ժամանակահատվածներում: Անդրադարձ է կատարվել Սպիտակի երկրաշարժի բերած մարդկային կորուստներին և տարածաշրջանի տնտեսական ենթակառուցվածքներին հասցված վնասներին:

Աղեթի գոտու սոցիալ-տնտեսական, մշակութային և ժողովրդագրական դրությունը մինչ երկրաշարժը ենթագլխում ներկայացված է Աղետի գոտում հայտնված նախկին վարչատարածքային շրջանների մինչերկրաշարժյան ժամանակաշրջանի տնտեսական ներուժը՝ արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրության ծավալներն ու դրանց տեսակարար կշիռը ՀԽՍՀ տնտեսության մեջ:

1988թ. դեկտեմբերի 7-ի ավերիչ երկրաշարժն անդառնալի հարված հասցվեց երկրի արդյունաբերական պոտենցիալի մի զգալի հատվածին, որը տեղակայված էր ներկայիս Լոռու և Շիրակի մարզերում: Մինչ Սպիտակի երկրաշարժը այս տարածաշրջաններում էին կենտրոնացված քիմիական, սննդի և թեթև արդյունաբերության հանրապետական և միութենական նշանակության բազմաթիվ ձեռնարկություններ, որոնք ծանրակշիռ տեղ ունեին երկրի արդյունաբերության մեջ՝ աշխատատեղերով ապահովելով տասնյակ հազարավոր մարդկանց:Մինչերկրաշարժյան Լենինականը Խորհրդային Հայաստանի խոշոր արդյունաբերական, գիտա-կրթական և մշակութային կենտրոն էր:1988 թ. հունվարի 1-ի տվյալներով Լենինականի արդյունաբերական ձեռնարկությունների թիվը հասնում էր 54-ի, որոնցում աշխատում էր շուրջ 48 000 մարդ: Ընդհանուր առմամբ մինչև երկրաշարժը Գյումրիում այս կամ այն աշխատանքի մեջ էին ներառված շուրջ 72,3 հզ. մարդ: Քաղաքի ձեռնարկություններում արտադրվում էր շուրջ 370 մլնռուբլի ընդհանուր արժեքով 700 տեսակ արտադրանք, որից միայն սննդի արդյունաբերության մասնաբաժինը կազմում էր 218 մլն ռուբլի: 1988թ. դրությամբ Լենինականի արդյունաբերական հզորություններն ապահովում էին ՀԽՍՀ ներքին համախառն արդյունքի շուրջ 21%-ը:

Իր բնակչությամբ և արդյունաբերական պոտենցիալով ՀԽՍՀ երրորդ քաղաք Կիրովականում գործում էին շուրջ երեք տասնյակ արդյուաբերական ձեռնարկություններ, որոնցում աշխատում էին 20 հազարից ավելի մարդ:Մինչերկրաշարժյան Կիրովականը նաև գիտակրթական աչքի ընկնող կենտրոն էր: Քաղաքում գործում էին շուրջ երեք տասնյակ հանրակրթական, հատուկ, երեկոյան և հերթափոխային, չորս երաժշտական և մեկ նկարչական դպրոցներ, մեկ տասնյակից ավելի ուսումնարաններ և տեխնիկումներ:

Ոչ պակաս արդյունաբերական ներուժ ուներ նաև մինչերկրաշարժյան Սպիտակը, որտեղ գործում էին հանրապետությունում իրենց տեսակի մեջ միակը համարվող երկու գործարան՝ շաքարի և վերելակների: Սպիտակի շաքարի գործարանի կիտրոնաթթվի ($C_6H_8O_7$) արտադրամասը իր թողարկման ծավալներով երրորդն էր նախկին ԽՍՀՄ-ում: Սպիտակում

գործում էին նաև թեթևարդյունաբերության երեք խոշոր ձեռնարկություններ՝ կաշվի փոխարինիչների գործարանը, կարի արտադրական միավորումը և տրիկոտաժի ֆաբրիկան: ՀԽՍՀ գյուղատնտեսության մեջ ևս զգալի էր Աղետի գոտում հայտնված տարածաշրջանների ներդրումը, որտեղ արտադրվում էր հացահատիկի, բանջարանա-բոստանային և հատկապես տեխնիկական կուլտուրաների զգալի բաժինը:

Այս ենթագլխում փորձ է արվել համեմատականներ անցկացնել 1926 թ. Լենինականի և 1988 թ. Սպիտակի երկրաշարժերի միջև: Ներկայացվել են նաևԼոռու և Շիրակի մարզերում անցկացված սոցիոլոգիական հարցումների տվյալները աղետի գոտում հայտնված բնակավայրերի տնտեսական, սոցիալ-առողջապահական և կրթամշակութային իրավիճակի մասին՝ մինչև Սպիտակի երկրաշարժը: Աղյուսակի միջոցով ներկայացված է վերոհիշյալ քաղաքների ժողովրդագրական պատկերը և բնակչության թվի շարժընթացը խորհրդային տարիներին:

Փրկարարական աշխատանքները Աղետի գոտում և աղետյալներին տրամադրված օգնության ձևերըենթագլխում ներկայացվել են երկրաշարժից անմիջապես հետո խորհրդային և միջազգային պետական կառույցերի փրկարարական աշխատանքները, ինչպես նաև աղետին հաջորդած առաջին ամիսներին աղետյալներին տրամադրված օգնության ծավալները: Բնական աղետների հետևանքները հարթելու համար անհրաժեշտ են միջոցառումներ, որոնց նպատակն է համաձայնեցնել գործողությունների մարտավարությունները «անհատ-պետություն-հասարակական կազմակերպություններ» շրջանակում, որտեղ որպես հիմնական գործոններ պետք է հանդես գան անհատն ու ոչ պետական կազմակերպությունները՝ մշակելով ակտիվ ադապտացիայի մոդելներ:Այս առումով ենթագլխում անդրադարձ է կատարվել տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների, բարեսիրական և հոգևոր-եկեղեցական կառույցների կողմից տարբեր խողովակներով Աղետի գոտու բնակչությանը տրամադրված դրամական և մարդասիրական օգնության ծավալներին և ձևերին:

Հետերկրաշարժյա զարգացումների պայմաններում, սակայն դրսևորվեցին այնպիսի կարևոր «թիրախային ենթահամակարգերի» արդյունավետությունը կամ անարդյունավետությունը, ինչպիսիք են բուժօգնությունը, սոցիալ-հոգեբանական օգնությունը, աղետից տուժածների սոցիալական վերականգնումը, աղետը վերապրած բնակչության սոցիալական պաշտպանվածությունը և այլք:

Աղետի հետևանքների վերացման տնտեսական, քաղաքական և սոցիոմշակութային հիմնախնդիրներըենթագլխում ներկայացվել են Աղետի գոտում երկրաշարժից անմիջապես հետոիրականացված փրկարարական և վերականգնողական աշխատանքները, որոնք իրենց ծավալներով աննախադեպ էին ԽՍՀՄ պատմության մեջ, ապաքննարկվել են այն օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները, որոնք հետերկրաշարժյան տասնամյակներում խոչընդոտեցին այդ գոտում հայտնված բնակավայրերի վերաշինման և վերականգնողական աշխատանքների արդյունավետությանը: Աղետի հետևանքների վերացման գործընթացը քննության է առնվել 1926թ. երկրաշարժի համեմատությամբ՝ վեր հանելով դրանց ընդհանրություններն ու տարբերությունները:

Որպես ընդհանրություն է դիտարկվել աղետից անմիջապես հետո ՀԽՍՀ կառավարության, ԽՍՀՄ պետական կառույցների՝ մասնավորապես բանակի անմիջական օգնությունը, ապա նաև միութենական մյուս հանրապետությունների աջակցությունը

աղետյալներին փրկելու, աղետի հետևանքները վերացնելու և վերականգնման աշխատանքներն իրականացնելու ուղղությամբ: Քանի որ Սպիտակի երկրաշարժը տեղի ունեցավ խորհրդային իշխանության օրոք, ուստի սկզբնական շրջանում մոտեցումներն ու գործողությունները նույնն էին, ինչ 1926 թ. երկրաշարժի ժամանակ:

Տարբերությունները, որոնք պայմանավորված էին քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային գործոններով, առավել ակնառու են երկրաշարժի հետևանքների վերացման ու աղետի գոտու վերականգնման գործընթացներում: Լենինականի 1926 թ. երկրաշարժի հետևանքներն ամբողջությամբ վերացվեցին մեկուկես տասնամյակում (մինչև Հայրենական պատերազմի սկիզբը), մինչդեռ Սպիտակի երկրաշարժի հետևանքները լիովին վերացված չեն և «Աղետի գոտի» հասկացությունը դեռևս մնում է արդիական: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ քաղաքական գործոնների մեջ կարևորը համակարգային տարբերությունն էր. 1926 թ. երկրաշարժից հետո վերականգնողական գործընթացներն իրականացվեցին խորհրդային իշխանության ու գաղափարախոսության պայմաններում, իսկ 1988 թ. երկրաշարժը տեղի ունեցավ նորանկախ հայկական պետականության կայացման սոցիալ-տնտեսական ու քաղաքական դժվարին պայմաններում: Երկրորդ կարևոր հանգամանքը Արցախյան շարժումն էր, Հայաստանի հանրապետության շրջափակումն ու պատերազմը, որոնք հնարավորություն չէին տալիս պետության ողջ ուշադրությունը սևեռել Աղետի գոտու վրա, օգտագործել առկա ֆինանսական ու մարդկային ողջ ռեսուրսները:

Երկրաշարժի հետևանքների վերացման գործում մեծ նշանակություն ուներ նաև տնտեսական քաղաքականությունը: Եթե Լենինականի դեպքում վերականգնողական աշխատանքներն իրականացվեցին երկրում ընթացող արդյունաբերականացման պայմաններում, որոնց արդյունքում քաղաքում կառուցվեցին բազմաթիվ ֆաբրիկաներ ու գործարաններ, ապա Սպիտակի երկրաշարժից հետո տնտեսության ազատականացումն ու անցումը ազատ շուկայական հարաբերությունների կազմալուծեցին առանց այդ էլ ավերված տնտեսական համակարգը:

Սոցիալական առումով ևս կային տարբերություններ: Լենինականի 1926 թ. երկրաշարժից հետո բնակչության մեծ ներհոսք սկսվեց քաղաք՝ նոր բացված ձեռնարկություններում աշխատողների պակասը լրացնելու համար, ուստի կարճ ժամանակում քաղաքային բնակչության թիվը կրկնապատկվեց, փոխվեց դրա սոցիալ-պրոֆեսիոնալ կազմը: Ժողովրդագրական զարգացումներին նպաստում էր նաև բնակչության սոցիալական պայմանների բարելավումը՝ բնակարանաշինությունը, կոմունալ-կենցաղային պայմանների ստեղծումը, հասարակության տարբեր խմբերի սոցիալական ապահովումը և այլ գործոններ: Սպիտակի երկրաշարժից հետո բնակչության մեջ խուճապային տրամադրություններ սկսվեցին, որոնք օբյեկտիվ պատճառներ ունեին՝ անօթևան մնացած հազարավոր մարդիկ, սոցիալական ծանր պայմաններ, ղարաբաղյան հակամարտություն և այլն: Արդյունքում Աղետի գոտուց և մասամբ ՀՀ այլ վայրերից սկիզբ առավ զանգվածային արտագաղթը, որը հանգեցրեց Աղետի գոտու բնակչության ժողովրդագրական երբեմնի բնականոն ընթացքի խաթարմանը:

Մշակութային գործընթացներում ևս հետընթաց կատարվեց. Սպիտակի երկաշարժից հետո արմատապես փոխվեց Աղետի գոտու բնակչության ողջ կենսամշակութային համալիրը՝ բնակարանը, տնտեսական գործունեության ձևերն ու եղանակները, սոցիոնորմատիվ մշակույթը, հոգևոր մշակույթն ու ամբողջությամբ վերցրած արժեհամակարգը:

ԳԼՈՒԽԵՐԿՐՈՐԴ
ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՊԱՀՈՎՄԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ

Այս գլխում ներկայացվել են երկրաշարժի տնտեսական հետևանքներն ու այն արմատական փոփոխությունները, որ կատարվեցին տարածաշրջանի բնակչության արտադրական և կենսապահովման մշակույթում: Քննարկվել են նոր պայմաններին հարմարվելու հիմնական ձևերն ու եղանակները, տնտեսական զբաղմունքների և տնտեսվարման, կենսապահովման նոր ձևերի սոցիոմշակութային առանձնահատկությունները, որ հատկապես նկատելի էր Աղետի գոտու քաղաքային բնակչության կենցաղում:

Աղետի գոտու բնակչության սոցիալ-տնտեսական դրությունը անկախության տարիներին ենթագլխում Աղետի գոտու բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի պատկերը ներկայացվել է երեք խոշոր բնակավայրերում իրականացված սոցիարցման տվյալների հիման վրա: Մանրամասն նկարագրվել են տնտեսական գործունեության ձևերը գյուղում և քաղաքում՝ առանձնապես կարևորելով աղետյալների կողմից որպես ադապտացման ձև ընտրված «գոյատևման մարտավարության» մաս կազմող օժանդակ տնտեսաձևերն ու հավաքչության տարբեր դրսևորումները:

Տնտեսական ընդհանուր համակարգի փլուզման և համարժեք այլընտրանքային տարբերակների բացակայության պայմաններում գյուղացիությունը հարկադրված փոխեց տնտեսական գործունեության հիմքում դրվող սկզբունքներն ու չափանիշները: Ընդհանուր (պետական) տնտեսական նպատակահարմարության գործոնը փոխարինվեց անձնական (ընտանեկան), լավագույն դեպքում՝ ազգակցական կամ դրացիական տնտեսական նպատակահարմարության գործոնով, ինչը, բնականաբար, շատ ավելի սահմանափակ հնարավորություններ է ընձեռում գյուղատնտեսության զարգացման համար: Ելնելով այս սկզբունքից, գյուղացին ստիպված է սահմանափակվել միայն կենսապահովման գյուղատնտեսությամբ, արտադրելով միայն այն և այնքան, որքան հարկավոր է ընտանիքի գոյության նվազագույնն ապահովելու համար:Նախկինում եղած աշխատատեղերի վերացումը կամ անհամեմատ կրճատումը, ինչպես նաև հասարակարգի փոփոխությունը նպաստեցին առևտրական մանր հարաբերությունների առաջացմանը. մանր առևտուրը քաղաքում և ապրանքափոխանակությունը գյուղերում դարձան ամենատարածված նոր զբաղմուքները:

Աղետի գոտուքաղաքային բնակչության հիմնական մասը, կտրուկ և անսպասելի փոփոխությունների հետևանքով կորցնելով նախկին կենսական կողմնորոշիչները, այդ թվում նաև պետության կողմից պաշտպանվածությունը, ենթարկվեց «սոցիալական շոկի»: Տնտեսական ճգնաժամի, զանգվածային գործազրկության, կենսամակարդակի կտրուկ անկման այդ բարդ պայմաններում քչերին հաջողվեց ավել կամ պակաս հաջող ադապտացվել նոր կյանքի իրողություններին: Բնակչության ճնշող մեծամասնությունը ստիպված էր մտածել միայն իր ընտանիքի տարրական գոյատևման մասին՝այսինքն ինչ-որ ձևով հարմարվելու սոցիալ-տնտեսական անկայուն այն իրավիճակի հետ, որում հայտնվել էր ոչ իր կամքով:

Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ անցումային շրջանում նշանակալիորեն մեծանում է տնային տնտեսությունների ինքնապահովող-ինքնաբավ գործառույթի կամ բնատնտեսական նշանակությունը:Այն ընդգրկում է գյուղատնտեսական մթերքների տարբեր տիպերի արտադրությունը՝ ընտանեկան սպառման, բնատնտեսական փոխանակման և

ապրանքադրամային իրացման նպատակով, ինչպես նաև ապրանքային արտադրություն և սպասարկումն՝ ինչպես ձեռնարկատիրության, այնպես էլ անհատական աշխատանքային գործունեության շրջանակներում և վերջապես՝ տնային տնտեսության ներքին սպասարկմանն ուղղված արտադրության և սպառման վերլուծությունների գնահատումը:

Վերջին տարիներին կատարված փոփոխությունները ստիպեցին Հայաստանի Հանրապետության և, ի մասնավորի, Շիրակի ու Լոռու բնակչությանը ինչ որ չափով վերադառնալու դեպի ավանդական տնտեսաձևերը՝ անհատական տնտեսավարմանը, տնայնագործությանը, օժանդակ տնտեսական զբաղմունքներին (մեղվաբուծություն, ձկնորսություն) և տնտեսության յուրացնող ձևերին (հավաքչություն): Հետերկրաշարժյան տարիներին, հատկապես 1990-2000-ական թթ. Գյումրիում և Վանաձորում լայն տարածում ստացավ մսուրային անասնապահությունը և տնամերձ հողամասների մշակումը, բարձրացավ դրանց տնտեսական դերը:

Քանի որ Աղետի գոտու աղքատ բնակչության մեծ մասի համար մինչ օրս կենսապահովման հիմնական միջոցը շարունակում է մնալ նպաստն ու բարեգործական կազմակերպությունների, առանձին անհատների կողմից ստացված օգնությունները, անդրադարձ է կատարվել նաևօգնության ձևերին ու դրանց սոցիոմշակութային հետևանքներին: Քննարկվել է հասարակական (ոչ կառավարական) կազմակերպությունների (ՀԿ) դերակատարումը՝ որպես գործազրկության ու աղքատության պայմաններում սոցիալական լարվածությունը թուլացնող գործոն:

Անօթևանության և բնակարանային խնդիրները. Երկրաշարժն ու դրան հաջորդած տնտեսական ճգնաժամը զգալի հարված հասցրեցին հայ ինքնության գլխավոր հարացույցներին՝ ընտանիքին և տանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայի համար տունն այն տիեզերքն է, որից դուրս, ինչպես ժամանակակից տիեզերաբանական տեսություններում է, ոչինչ գոյություն չունի, դրա հանդեպ վերաբերմունքի ամեն մի ձևափոխում վկայում է հայ ազգի հոգեբանական լուրջ շեղումների ու ազգային արժեհամակարգի խաթարման մասին: Ցավալի է, սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երկրաշարժից հետո աղետը վերապրածների մեջ փոխվել է տան՝ որպես աշխարհի մոդելի ավանդական ընկալումը, տունն այլևս առաջնային արժեք չէ աղետի գոտու բնակչության համար:

Խորհրդային և հետխորհրդային շրջանում անօթևանության խնդրի լուծման, բնակֆոնդի վերականգնման, ժամանակավոր կացարանների վերացման ուղղությամբ պետական պատկան մարմինների կողմից որդեգրած ռազմավարությունն ու այդ ծրագրերի կենսագործումը սպասված արդյունքը չտվեց: Դեռևսանօթևանության խնդիր ունեն հազարավոր ընտանիքներ,որովհետևժամանակավորկացարաններումբնակվումեննևահարյուրավորայնպիսի ընտանիքներ,
որոնցհանդեպպետությունըբնակարանովապահովելուպարտավորությունչիստանձնել:
Աղետի գոտու անօթևան բնակչության շրջանում երկարատև տնակային կյանքը ձևավորել է այսպես կոչված ***դոմիկային մշակույթ***, որը սոսկ կենցաղային բաղադրիչից բացի պարունակում է նաև սոցիալ-հոգեբանական և մշակութային բազմաթիվ բացասական տարրեր:

Միգրացիան որպես ադապտացիոն այլընտրանքային եղանակենթագլխում արտագաղթը դիտարկվել է որպես բնակչության ադապտացման կարևոր ձևերից մեկը:

Հրապարակում եղած գիտական հետազոտությունների, անցկացված հարցազրույցների և սոցիոլոգիական հարցումների հիման վրա փաստվել է, որ Շիրակի և Լոռու մարզերի բնակչության տեղաշարժերի հիմնական միտումները ձևավորվել են երկրաշարժից անմիջապես հետո՝ բաժանվելով մի քանի փուլերի. 1988-2002թթ., 2002-2008 թթ. և 2008 թ.-ից մինչ օրս: Այստեղ բնակչության միգրացիան չի դիտարկվում որպես միայն բնական աղետի հետևանք, երբ անօթևան բնակչության մի մասը կենսապահովման անտանելի պայմանների բարելավման ձգտումով հեռանում էր հարազատ բնակավայրից, այլև կարևորվում են զանգվածային գործազրկությունն ու ծանր բարոյահոգեբանական մթնորոտի նշանակությունը այդ գործընթացում: Նույնիսկ բնակարանային հիմնախնդրի լուծումը չկանխեց աղետը վերապրածների արտահոսքը, քանի որ շատերը նոր ստացած բնակարանը վաճառում ու հեռանում էին իրենց բնակավայրերից և երկրից:

Ըստ արտագաղթի տևողության ժամկետի առանձնացվում է դրա երկու տիպ՝ժամանակավոր (սեզոնային) և մշտական (անվերադարձ): Ժամանակավոր արտագաղթողները գերազանցապես աշխատանքային միգրանտներն են: Եթե նախկինում նրանք արտագնացության էին մեկնում վաղ գարնանը և վերադառնում ուշ աշնանը, ապա ներկայումս այդ ժամկետները հաճախ չեն պահպանվում ու նրանց շուրջ մեկ քառորդը մեկ տարուց ավելի գտնվում է հանրապետությունից դուրս:Խորհրդային շրջանի հետ համեմատած՝ փոխվել են նաև միգրանտների սոցիալ-մասնագիտական կազմը և զբաղվածության ոլորտները:

Աշխատանքային միգրանտների տեղաշարժերի ուղղությունից ելնելով դրանք բաժանվել են երկու խմբի՝ միջպետական (արտագնա)և ներհանրապետական: Միջպետական աշխատանքային տեղաշարժերի մեջ ընդգրկված են ինչպես սեզոնային արտագնա աշխատանքի մեկնածները, այնպես էլ ճոճանակային միգրացիայում ներգրավվածները:Հետազոտությունները ցույց են տվել, որ դրանք տեղի են ունենում քաղաք-գյուղ, գյուղ-քաղաք, գյուղ-գյուղ և քաղաք-քաղաք ուղղություններով:

Անվերադարձ կամ մշատական արտագաղթի երևույթը նույնպես կապված է երկրաշարժի անմիջական ազդեցության հետ: Աղետից անմիջապես հետո բնակչության մի ստվար զանգված ժամանակավորապես թողեց մշտական բնակության վայրը, որի մի մասն այդպես էլ չվերադարձավ:Հետագա տարիներին մշտական արտագաղթի ծավալների աճը պայմանավորված էր սոցիալ-տնտեսական բարդ իրադրությամբ ու առաջացած հիմնախնդիրների լուծման այլընտրանքային եղանակների բացակայությամբ: Հետազոտությունը ցույց տվեց, որ արտագաղթն իր բոլոր ձևերով, մարզային, համայնքային, անհատական մակարդակներով թողնում է տնտեսական, սոցիալ-ժողովրդագրական և մշակութային լուրջ հետևանքներ:

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ
ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՂԵՏՅԱԼՆԵՐԻ ՍՈՑԻՈՆՈՐՄԱՏԻՎ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ

Գլուխընվիրված է ընտանիքի հարմարվողականության ձևերի ու դրանց առանձնահատկությունների պարզաբանմանը: Ընտանիքը դիտարկելով որպես հասարակական օրգանիզմի այն բաղկացուցիչ մասը, որը կրում է տվյալ ժամանակաշրջանի հիմնախնդիրների ողջ ծանրությունը, այն ներկայացվում է ավանդական և նոր մշակութային իրողությունների ենթատեքստում՝ վեր հանելով ներընտանեկան հարաբերություններում

կատարված և ընթացող փոփոխությունները: Բնութագրելով աղետի ենթարկված ընտանիքը՝ քննարկվել են դրանում կատարված կառուցվածքային, գործառութային, վարքագծային փոփոխությունները:

Ընտանիքի հարմարվողականության առանձնահատկությունները ենթագլխումաղետը վերապրած ընտանիքների հարմարվողականության ձևերն ու եղանակները դիտարկվել են փուլային տարբերակով, առանձնացվել են երեք՝ ***հոգեբանական ադապտացիայի*** (1988-1992թթ.), ***մշակութային ադապտացիայի***(1993-1998 թթ.) և ***սոցիալական ադապտացիայի*** փուլերը (1998-2010 թթ.):

Որպես շրջակա միջավայրի հետ փոխազդեցության խախտման արդյունք արձանագրվել են նաև ընտանիքի անհարմարվողականության (դեզադապտացիայի) դրսևորումներ, որոնց հետևանքով աղետը վերապրած և հատկապես անապահով ընտանիքները լիովին չեն կարողանում իրականացնել իրենց ավանդական սոցիալական գործառույթները կամ էլ դրական սոցիալական դերակատարում ունենալ ճգնաժամային պայմաններում՝ հաճախ որդեգրելով ապասոցիալական վարքագիծ:

Ընտանիքն իրականացնում է մի քանի գործառույթ, որոնցից առաջինն ու ամենակարևորը սերնդի վերարտադրությունն է՝ այսինքն հասարակությունը կազմող անհատների փոփոխության հիմնական մեխանիզմը: Եվ եթե ադապտացման առաջին փուլում արձանագրվեց ծնելիության աճ, ապա հաջորդ բոլոր տարիներին արձանագրվեց միայն անկում: Այսօր ընդունված է ծնելիության անկման հիմնական գործոններից մեկը համարել սոցիալ-տնտեսական ճգնաժամի հետևանքով բնակչության կենսապայմանների վատթարացումը, կենսամակարդակի ու կյանքի որակի անկումը:

Շատ ընտանիքների և հատկապես երիտասարդների արտագաղթի փաստը գյուղից, որտեղ նրանք սովորաբար թողնում են իրենց ծեր ծնողներին, ինչպես նաև ընտանիքի ղեկավարի երկարատև մեկնումը բացասաբար է ազդում ընտանիքների կառուցվածքի վրա՝ դրսևորելով թվաքանակի նվազում ու դրա հետևանքով ամուսնական տարիքի տղաների ու աղջիկների համամասնության խախտում, ծնելիության անկում, ամուսնական տարիքի բարձրացում կամ ամուսնալուծված, կիսատ ընտանիքների (երեխաների հետ միայնակ մնացած կանանց) ձևավորում:

Ընտանիքից երկարատև բացակայությունն առաջ է բերում հոգեբանական և բարոյական մի շարք լուրջ հիմնախնդիրներ:Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նույնիսկ այն ընտանիքներում, որտեղ արտագաղթողներ չկան, հասարակական փոփոխությունների և սոցիալ-տնտեսական նոր հարաբերությունների հետ դժվարությամբ ադապտացվելու հետևանքով, նկատվում են ժողովրդագրական վարքագծի որոշակի հարմարվողական փոփոխություններ: Այդ փոփոխությունները վերաբերում են այնպիսի կարևոր սոցիալ-ժողովրդագրական ինստիտուտների, ինչպիսիք են ամուսնությունը, ընտանիք կազմելը և երբեմն ուղղված են ընտանիք կազմելուց և երեխաներ ունենալուց հրաժարվելուն, ամուսնալուծության մակարդակի բարձրացմանը, այսինքն հայ ավանդական ընտանեկան արժեքներից հրաժարվելուն:

Ներընտանեկան հարաբերություններն ու դերային վարքի փոփոխություններըենթագլխում քննվել են աղետը վերապրած ընտանիքներում տղամարդկանց, կանանց և երեխաների հարմարվողականության առանձնահատկությունները:

Ներկայացվել են հետաղետյան շրջանում տղամարդկանց ավանդական դերային վարքում տեղի ունեցած արմատական փոփոխություններն ու աշխատատեղերի համատարած բացակայության պայմաններում ձևավորված ադապտացիոն վարքի ***պասիվ, միջին և ակտիվ*** ձևերը, որոնք առանձին-առանձին բնութագրվել և ուսումնասիրվել են հիշյալ ենթագլխում:

Վերը հիշատակված փոփոխությունները, բնականաբար, իրենց ազդեցությունն ունեցան նաև կնոջ կարգավիճակի, դերի և գործառույթների վրա: Կարգավիճակի փոփոխությունը հանգեցրեց կնոջ դերային երկվությանը և հարմարվողականության առավել բարձր մակարդակին, քան տղամարդկանցը: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ընդհանրություններով հանդերձ, քաղաքաբնակ և գյուղաբնակ կանանց ադապտացիոն գործընթացներում նկատվում են նաև որոշակի տարբերություններ՝ կապված քաղաքային և գյուղական մշակույթների առանձնահատկությունների հետ:

Ներընտանեկան հարաբերություններում և ադապտացիոն գործընթացներում ամենախոցելի խումբը երեխաներն են, որոնց սոցիալականացման գործընթացն ընթանում է ճգնաժամային ոչ բարենպաստ պայմաններում: Աղետի գոտու բնակչության շրջանում, որտեղ աղքատության ցուցանիշներն ամենաբարձրն են, բազմաթիվ են երեխաների ապասոցիալական վարքի դրսևորումները, որոնք լուրջ խոչընդոտներ են հանդիսանում նրանց սոցիալական ադապտացիայի գործընթացում:

Աղետը վերապրած բնակչության հարմարվողականության աստիճանը կարելի է գնահատել նաև առողջապահական ոլորտի նկատմամբ մարդկանց վերաբերմունքով, քանի որ այստեղ արտացոլվում են սոցիալ-տնտեսական պայմաններից բխող բազմաթիվ երևույթներ: Առողջապահական խնիրների լուծումը դիտարկվել է երկու կտրվածքով՝ երկրաշարժից հետո, երբ ակնթարթայինաղետըմարդկանցմոտառաջացրեցամենատարբերբնույթիծանր, բազմակիևզուգորդվածվնասվածքներ և դրան հաջորդած տասնամյակներին, երբ սոցիոմշակութային փոփոխությունների արդյունքում առաջացան առողջական այլ բնույթի խնդիրներ: Հարցման արդյունքները ցույց են տվել, որ Գյումրի քաղաքի բնակչության մեծ մասի ցածր կենսամակարդակը, սննդամթերքի անհրաժեշտ տեսականու ոչ բավարար ապահովվածությունը, սանիտարահիգիենիկ նվազագույն նորմերին չհամապատասխանող կենցաղային պայմանները, բարոյահոգեբանական լարվածությունը և այլ ազդակներ, իրենց անմիջական ազդեցությունն են թողել բնակչության մեջ հիվանդների քանակի ավելացման վրա:

Ազգակցական հարաբերություններըենթագլխում դաշտային նյութերի և սոցհարցումների արդյունքների համադրմամբ փաստվել է, որ ազգակցական և համայնական խմբերը շարունակում են մնալ Աղետի գոտու բնակչության սոցիալական կյանքի կարևոր օղակները: Ազգակցական փոխօգնությունը հատկապես մեծ չափեր ընդունեց աղետից անմիջապես հետո, երբ անտուն մնացած, կորուստ ունեցող հարազատներին առաջինը ձեռք մեկնեցին մերձավորները: Հետագայում այդ օգնության բնույթը փոխվեց, երբ առաջ եկան սոցիալ-տնտեսական նոր հիմնախնդիրներ: Մոտ և հեռու ազգականների համագործակցությունն ու փոխօգնությունը կարևոր գործոն դարձան անցումային հասարակության ճգնաժամի պայմաններում ընտանիքի կենսունակության, հոգևոր և նյութական պահանջների բավարարման համար: Այդ օգնությունն առաջին հերթին դրսևորվեց հարազատներին նյութապես ապահովելու նպատակով նրանց օժանդակելու տարբեր ձևերով: Հասարակական օգնության ամենատարածված ձևը նվիրատվությունն է, սակայն

օգնությունների հասարակական սանդղակում ոչ այնքան գումարով կամ ընծայով աջակցելն է գնահատվում, ինչքան աշխատանքի տեղավորելու, ինքնուրույն վաստակելու հնարավորություն ստեղծելը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- Հանրապետության անկախացումից հետո ընթացող սոցիալ-տնտեսական բարեփոխումների հետևանքով հասարակության սոցիալական կառուցվածքի բնույթի և ընդհանուր ձևի կտրուկ փոփոխությունը հանգեցրին ոչ միայն առարկայական, այլև արժեքային ու սոցիալական նոր շերտավորումների: Հայաստանի ամենաաղքատ, տնտեսապես առավել պասիվ և սոցիալապես ամենախոցելի մարզերը երկրաշարժից մինչ օրս Շիրակն ու Լոռին են: Աղքատությունն այստեղ դարձել է ապրելակերպ, նրան հարմարվելու մեխանիզմը՝ սոցիալական հավասարության, արդարության, կրթության և առողջապահության հավասար մատչելիությունից հրաժարումը, որը հանգեցրել է անձի սոցիալական նշանակության կորստի:
- Նոր՝ անցումային հասարակության սոցիալական կառուցվածքի անկայունությունը առաջ է բերել նաև դերային անորոշություն: Այն կենսակերպը, որը մինչանցումային փուլում սովորական ու բնականոն էր թվում, նոր պայմաններում դարձավ խորթ ու անսովոր: Այդ փոփոխությունները հաճախ նպաստեցին մերժողական, հոռետեսական տրամադրությունների ձևավորմանը:
- Հետերկրաշարժյան սոցիոմշակութային ցնցումների արդյունքում բնակչության առօրյա կենսաձևի փլուզումը հանգեցրեց մասսայական ապակողմնորոշման, ինքնության կորստի՝ ինչպես անհատական, այնպես էլ խմբային մակարդակներում: Մյուս կողմից, սակայն, սկսվեցին նոր մշակութային մոդելների որոնման գործընթացներ՝ ուղղված սոցիոմշակութային դաշտի որոշակիության վերականգնմանը: Արդյունքում ձևավորվեց սոցիալական իրականությանը հասարակության համարժեք ադապտացիայի խնդիրը: Հետազոտությունը ցույց տվեց, որ ադապտացիոն գործընթացները մի դեպքում կարող են պատճառ դառնալ մարդկանց սոցիալական կապերի հետագա կորստի, որի հետևանքով սոցիումի կյանքից աստիճանաբար մեկուսացան և օտարվեցին սոցիոմշակութային ադապտացիայի անհրաժեշտ նախապատրաստվածություն չունեցող խավերն ու առանձին մարդիկ, սակայն նույն գործընթացների ճիշտ կազմակերպման դեպքում նախկին սոցիալական կապերը պահպանվեցին նաև նոր ձևավորված հասարակական միջավայրում:
- Փոփոխվող հասարակության պայմաններին մարդկանց ադապտացվելու հիմնական դժվարություններից մեկն էլ այն էր, որ չափանիշների, արժեքների վերագնահատման, վերարժեքավորման արդյունքում ստեղծված իրավիճակում մարդիկ չունեին համապատասխան իրազեկություն, թե ինչպե՞ս, ի՞նչ կազմակերպությունների, պետական կամ հասարակական կառույցների միջոցով, ի՞նչ հաջորդականությամբ, ընթացակարգով է հնարավոր մեղմել, լուծել իրենց հիմնախնդիրները, խորանալ և ճանաչել նոր փոխհարաբերությունները, արժեքային կողմնորոշումները: Մի խոսքով՝ կրթական ու խորհրդատվական աշխատանքների իրականացումը թույլ կտար ավելի մեղմ ու սահուն կատարել ադապտացիոն գործընթացները:
- Շնորհիվ հարմարվողական նոր ձևերի, մարդկանց մեջ ձևավորվում է կենցաղային գիտելիքների մի հանրագումար՝ հիմնված ավանդական կենսապահովման մշակույթի նախկին փորձի վրա: Էմպիրիկ գիտելիքների այդ համակարգը մշակվում է տարբեր

միջոցներով և առաջին հերթին գործող ավանդույթների պահպանությամբ ու նորերի ստեղծմամբ, ստեղծագործական մոտեցումների կիրառմամբ: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ սոցիոմշակութային հարմարվողության առումով ավելի ակտիվ են կանայք, քանի որ առավելապես նրանց վրա ընկավ արտակարգ իրավիճակում գոյատևելու հիմնախնդրի լուծումը:

- Աղետի գոտու բնակչության հետերկրաշարժյան տարիների սոցիոմշակութային հարմարվողականության գործընթացն առաջ է բերել մի շարք նոր իրողություններ: Սկսված արմատական վերափոխումներն ու դրանց հարմարվելու դժվարություններն առաջացրին աշխատանքային միգրանտների հսկայական արտահոսք:
- Ժողովրդագրական գործընթացների արդյունքում էական փոփոխություններ կատարվեցին ընտանիքի կառուցվածքում, մասնավորապես կրճատվեց նրա կազմը, մեծացավ միայնակ ծերերի ու թոշակառուների, միայնակ մայրերի ու կիսատ ընտանիքների թիվը, փոխվեցին ներընտանեկան ավանդական կարգն ու հարաբերությունները՝ տղամարդկանց, կանանց և երեխաների դերն ու կարգավիճակը:
- Սոցիալական ադապտացիայի գործընթացը կրում է անկայուն բնույթ, քանի որ գոյություն ունեն լուրջ անհամաձայնություններ բարեփոխումների և մասնավոր ադապտացիոն ռազմավարությունների աշխարհայացքային հիմքերի միջև:Կոլեկտիվիզմից՝ ինվիդուալիզմին, պահպանողականությունից՝ առաջադիմությանը, ավանդականից՝ նորարարությանն անցումը ադապտացիայի սուբյեկտների կողմից ոչ միշտ է ադեկվատ ընդունվում: Համայնական ոգով դաստիարակված հասարակությունն ամբողջությամբ վերցրած շարունակում է դուրս մղել առանձին մարդկանց ու խմբերի անհատական, ռացիոնալ ձգտումները: Մարդկանց գիտակցության և վարքի փոփոխությունները բավականին դանդաղ են ընթանում, շատերը դժվարությամբ են հարմարվում նոր սոցիալ-տնտեսական ու սոցիոմշակութային փոփոխություններին:
- Հետազոտությունը թույլ տվեց հաստատագրել, որ աղետի գոտու բնակչության մեջ ձևավորվել է հարմարվողականության երեք ձև ՝ պասիվ, միջին և ակտիվ: Պասիվ ադապտացվածներին են պատկանում այն մարդիկ, որոնց հարմարողական ռեսուրսներն անբավարար են, ովքեր գրավել են սպասողական դիրք, իներտ են, պատրաստ չեն ակտիվ գործողությունների իրենց ու ընտանիքի անդամների կենսագործունեությունն ինչ-որ ձևով ապահովելուն: Սրանց մեջ գերակշռում է բացասական տրամադրվածությունը. անորոշ իրավիճակը, ապագայի նկատմամբ անվստահությունը, հուսալքությունը այս մարդկանց մեջ առաջացրել են նոստալգիա և մերժողական վերաբերմունք իրականության նկատմամբ: Այս խմբում առանձնանում էայսպես կոչված «հետնապահների» կամ մարգինալների ենթախումբը, որն ընդգրկում է ծայրահեղ ցածր ադապտացիոն ներուժ (ռեսուրս) ունեցող մարդկանց: Այս խմբի, որն ամենափոքրաքանակն է, վարքագծին բնորոշ են հոգեբանական լարվածությունն ու ինքնագիտակցության անորոշությունը: Մարգինալների այս հատվածին հատուկ է նաև ապասոցիալական վարքագիծն ու սովորական սոցիալական միջավայրից ինքնակամ մեկուսացումը:Միջին ադապտացման ձևը որդեգրած մարդիկ փորձում են ինչ-ինչ քայլեր ձեռնարկել ընտանիքի առջև ծագած խնդիրները լուծելու ուղղությամբ: Չկարողանալով իրենց բնակավայրում հասնել հաջողության, նրանք դիմում են արտագաղթի: Ակտիվ հարմարվողական վարքը բնորոշ է երիտասարդ սերնդին, որը փորձում է որոշակի քայլեր

ձեռնարկել ու համապատասխան տեղ գրավել նոր միջավայրում: Սրանք մանր և միջին բիզնեսում զբաղվածներն են, որոնք, հույսը դնելով իրենց վրա, զբաղվում են արհեստներով, գործարարությամբ՝ բացելով կրպակներ, խանութներ, վարսավիրանոցներ, ծաղկի և հանդեսի սրահներ, սպասարկման կենտրոններ և այլն:

- Ամփոփելով կարող ենք փաստել, որ Աղետի գոտու բնակչության սոցիալ-մշակութային ադապտացիայի գործընթացը լիովին չի ավարտվել և բազմաթիվ հիմնախնդիրներ դեռևս լուծման կարիք ունեն:

Հավելվածում ներկայացված է Լոռու և Շիրակի մարզերում կատարված սոցիոլոգիական հարցումների հարցաթերթիկի նմուշը:

Ատենախոսության թեմայով հեղինակի հրատարակած աշխատանքները

1. Աղետների ազգաբանական ուսումնասիրության հիմնախնդիրները, ՇՀՀԿ Գիտական աշխատություններ, հ.XVIII, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Գյումրի, 2015,էջ 146-153:
2. 1926թ. Լենինականի և 1988թ. Սպիտակի երկրաշարժերի համեմատական վերլուծության փորձ, ՇՀՀԿ Գիտական աշխատություններ, հ.XIX, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Գյումրի, 2016,էջ 164-172:
3. Вклад Армянской Апостольской церкви в деле социально-культурной адаптации населения Зоны бедствия, с. 19-26, в. кн., The fundamentals of our spirituality, Proceedings of the VIII International Scientific conference,edit. ‘’Universali’’, Tbilisi, 2016.

Торгом Григорович Аганян

Социально-культурная адаптация пережившего землетрясение населения

Резюме

Данная диссертация является первым комплексным исследованием проблем социокультурной адаптации населения Зоны бедствия. Основой для изучения изменений в культуре жизнеобеспечения и социо-нормативного поведения разных социальных слоёв и половозрастных групп, переживших Спитакское землетрясение, был анализ собранного и записанного автором полевого этнографического материала, социологического анкетирования, а также архивные материалы, исследования разных авторов. Работа состоит из введения, трех глав, заключения, приложения и библиографии.

Первая глава посвящена описанию Зоны бедствия до и после землетрясения.На основе исторических, краеведческих, демографических и других исследований,архивных материалов и полевых этнографических и социологических материалов, представлено описание бывших административный районов, ныне вошедших в состав Ширакского и Лорийского марзов РА, а также научно-образовательный и культурный потенциал трёх крупных городов, оказавшихся в Зоне бедствия: Гюмри, Спитак и Ванадзор. Автором рассмотрены вопросы, касающиеся числа погибших и экономическому ущербу, нанесённому инфраструктуре региона вследствие землетрясения.Проанализированы итоги социологических опросов, проведённых в городах Спитак, Ванадзор и Гюмри, о социально-экономической,образовательно-культурной ситуации сложивиеся до Спитакского землетрясения. Проведён сравнительный анализЛенинаканского

(1926г.) и Спитакского (1988г.) землетрясений. Представлены спасательные работы, проведённые сразу после землетрясения советскимии международными государственными структурами, а также объем помощи пострадавщим от землетрясения в течение первых нескольких месяцев. Представлены объемы финансовой и гуманитарной помощи, поставляемой через различные каналы местных и международных общественных организаций, благотворительных и церковных структур. Проанализированы объективные и субъективные факторы, которые в первые десятилетия после землетрясения препятствовали восстановительным работам в районах зоны бедствия.

Вторая глава посвящена формамадаптации культуры жизнеобеспечения населения. Представлено социально-экономическое положение населения в годы независимости, виды хозяйственной деятельности в городе и на селе, при этом акцентированы различные вспомогательные виды хозяйства и собирательства, которые стали одной из форм адаптации- «Тактики выживания». Проанализированы основныевиды и способыприспособления к новым условиям, социокультурные особенности новых видов жизнеобеспечения,хозяйственных занятий и др. Представлены виды помощи и их социо-культурные последствия. Проанализирована роль общественных (неправительственных) организаций как фактора ослабления социального напряжения в условиях бедности и безработицы. Представлены результаты реализации проектов и стратегии государственных структур в советский и постсоветский период порешению проблем бездомности, восстановление жилищного фонда и ликвидации временных построек.

Зафиксировано появление и укоренениетак называемой «домиковой» культуры среди населения Зоны бедствия, которая, кроме бытовой составляющей, содержит в себе многочисленные отрицательные социально-психологические элементы. Рассмотрены различные виды миграции,как альтернативные способы социально-культурной адаптации. Миграция из Зоны бедствия проходила в три этапа: 1988-2002гг., 2002-2008гг., с 2008г. по сей день. Миграция населения рассматривается не только как последствие землетрясения, после чего часть бездомного населения, оказавшись в невыносимых бытовых условиях, уезжала из родных мест, но и как следствие массовой безработицы и создавшейся тяжёлой нравственно-психологическая атмосферы. Показано, что решение жилищного вопроса не способствовало уменьшению потока мигрантов, переживших землетрясение, так как многие продавали полученные новые квартиры и уезжали и из местпроживания, и из страны.

В третьей главе рассмотрены вопросы особенности адаптации в социо-нормативной культуре населения, пережившего бедствие.Виды и способы адаптации переживших бедствие семей рассмотрены поэтапно. Выделено три этапа: психологическая адаптация (1988-1992гг.), культурная адаптация (1993-1998гг.) и социальная адаптация (1998-2010гг.). Зафиксированы случаи дезадаптации семей,которые,вследствие нарушения взаимовлияния с окружающей средой,не полностью осуществляли свои традиционные социальные функции или же не сыграли положительную социальную роль вкризисных условиях, часто показывая антисоциальное поведение. Проанализированы особенности адаптации мужчин, женщин и детей. Представлены коренные изменения,происшедшиев традиционнойповеденческой роли мужчин, послебедственный периоди в условиях повсеместного отсутствия рабочих мест.

Отмечены пассивное, среднее и активное виды адаптационного поведения. Изменения произошли и в традиционной ролевой функции женщин. Изменение традиционного статуса привело, по сравнению с мужчинами, к дуализму роли женщины и к более высокой степени адаптации. Вследствие проведенного исследования выяснилось, что наблюдаются различия в адаптационных процессах женщин в городской и сельской местностях, что связано с соответствующими особенностями культуры. Во внутрисемейных отношениях и адаптационных процессах наиболее уязвимой группой являются дети, адаптационные просессы которых проходят в кризисных неблагоприятных условиях.Среди населения зоны бедствия, где показатели бедности самые высокие по РА, наблюдаются многочисленные случаи антисоциального поведения детей, что являлется серьёзным препятствиемна пути их социальной адаптации.

Сравнительный анализ полевого этнографического материала и итогов социологического опросов показал, что родовые и общинные группы продолжают оставаться ключевыми в социальной жизни населения Зоны бедствия. Родственная взаимопомощьприняла особенновнушительные размеры сразу после бедствия, когда первыми на помощь бездомным и потерявшим близких пришли ближайшие родственники.Взаимовыручка и взаимопомощь близких и дальних родственников в условиях кризиса переходного обществастали важными факторами жизнеспособности, удовлетворения духовных и материальных потребностей семьи.

В заключении отмечается, что Спитакское землетрясение и последующий социально-экономический кризис нарушили основыжизни большей части населения. После землетрясения,в условиях политического и социально-экономического кризиса,в социальной структуре общества сформировалась неустойчивость,которая привела к ролевой неопределённости. Таким образом, выяснилось, что большая часть населения Зоны бедствия выбрала для адаптации «стратегию выживания». Процесс социально-культурной адаптации населения Зоны бедствия не завершён, и многое проблемы требуют своего решения.

Torgom Aghanyan

Social and cultural adaptation of the population thatsurvived the earthquake

Summary

The following thesis is the first complex study of issues of social and cultural adaptation of the population of the Disaster Zone. Ethnographic field material compiled by the author, sociological questionnaires, archive material as well as researches of several authors made the basis for the study of the change in the culture of life support and the social-normative behaviour of various strata of society as well as sex-and-age groups of population who survived the earthquake of Spitak.

The thesis comprises the foreword, three chapters, conclusions, the appendix and the list of literature.

The first chapter characterizes the Disaster Zone before and after the earthquake. It presents the description of former administrative districts included in Shirak and Lori regions as well as the scientific-educational and cultural potential of three main urban settlements of the Disaster Zone, Gyumri, Spitak and Vanadzor based on the historiographic, demographic and Armenian study researches, archive documents and ethnographic field and sociological material compiled by the

author.It mentions the human toll and damage to the regional economic infrastructures resulted in the earthquake of Spitak. The chapter presents sociological survey made in Lori and Shirak regions on economical, health and social and cultural-educational state of settlements in the Disaster Zone before the earthquake of Spitak.Acomparisonwas made between the Leninakan earthquake of 1926 and theSpitak one of 1988. The rescue operations realized by soviet and international state structures right after the earthquake as well as aid amount rendered to the survivors in the first months following the disaster are presented.

Here the amount and ways of pecuniary and humanitarian aid rendered to the people of the Disaster Zone by local and international public organizations and benevolent and spiritual ecclesiastical structures are also spoken about. The objective and subjective factors disturbing the reconstruction and restoration of the Disaster Zone settlements during post-earthquake decades are discussed.

The second chapter comprises the ways of adaptation in the culture of population life support. It presents social and economic state of the Disaster Zone population in the years of Independence, ways of economic activities in villages and cities thus especially highlighting the additional economic ways and different expressions of the collection as a component of "existence strategy" chosen by the survivors as a way of adaptation. It speaks about the main ways and methods of adapting to new conditions as well as social and cultural peculiarities of new methods of economic occupation, management and life support. It presents the methods of aid and its social-cultural consequences. The role of public (non-government) organizations as a factor relieving social strainsduring unemployment and poverty is also discussed. The chapter presents the strategy adopted by state bodies on the issue of the homeless in soviet and post-soviet period, the re-establishment of the housing stock andthe removal of temporary shelters and the results of the programs when realized. It reports the rooting of so-called "domik culture" (cabin shelters) within homeless people of the Disaster Zone which besides the social factor, also contains many negative social-psychological elements. Ways of migration are discussed as an alternative method of social-cultural adaptation. Immigration from Disaster Zone is viewed to be one of the main ways of adaptation. It was held in three stages: 1988-2002, 2002-2008 and from 2008 till present day. Migration of population is not reviewed as the only consequence of natural disaster when the majority of the population leaves the homeland striving for improvement of unbearable conditions of life support. Vast unemployment and the severe moral and psychological atmosphere are of great significance as well. It was found out that the solution of the vital issues of housing stock did not prevent the outflow of the survivors because many of them would sell their new housesand leave their homeland.

The third chapter gives a consideration to the peculiarities of adaptation in the social and normative culture. The adaptation ways and methods of the disaster survivors are reviewed in stages, including particularly ***psychological adaptation*** (1888-1992), ***cultural adaptation*** (1993-1998) and ***social adaptation*** (1998-2010). Deadaptation of familiesis also viewed resulted in the disturbance of interaction with environment. As a result, the survivors cannot fully implement their positive social role in critical situations. They often hold non-social behavior. The chapter reviews the adaptation peculiarities of men, women and children in families that have survived the disaster. It also presents

the radical changes in traditional role behavior of men as well as the ***passive, average*** and ***active*** ways of adaptation behavior developed in the vast absence of employment in the post-disaster period. Women's status and traditional role functions have been changed. It led to their double role and a higher level of adaptation than that of men. The study has revealed some differences in adaptation process between women in cities and villages. The differences relate to the peculiarities of urban and rural cultures. Children make the most vulnerable group in adaptation process and in the relations among family members.Their socialization is held in unfavourable critical conditions. Within the population of the Disaster Zone which has the highest poverty index, more children express anti-social behaviour. The latter is a serious obstraction in the process of their social adaptation. Combinations of the results of ethnographic field material and social survey report that kindred and communal groups keep on staying the main circles of social life of the Disaster Zone population. Kindred aid especially increased right after the disaster when close people first rendered assistance to their homeless relatives. Cooperation and mutual assistance of near and distant relatives became a significant factor to meet the vitality, the spiritual and material demands of a family during the transitional society crisis.

The conclusion marks that the 1988 earthquake of Spitak and social-economic crisis resulted in it have disturbed the basis of existence of the majority of population, social institutions and public life in general. During post-earthquake political and social-economic crisis an instability of social structure of the society developed thus leading to role indefiniteness. The study showed that the majority of the earthquake area population chose the "existence strategy" for the adaptation to the occurred difficult social-economic conditions. The process of social-cultural adaptation of the Disaster Zone population has not completely been finished, however numerous vital issues are to be solved.